

ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆ ԱԶԱԿՑՈՒՄ Է ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐԺԵՇՂԹԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻԿՐՈ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՀԱՄԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՆ

ԵՐԵՎԱՆ – ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային Ծրագիրը սկսում է նոր նախագիծ՝ «Վերականգնվող էներգիայի հասանելիություն Հայաստանի միկրոձեռնարկությունների համար»: Այն կնպաստի ձեռնարկությունների արտադրողականության բարձրացմանը և եկամտաբերության աճին:

Ծրագիրը սննդի արտադրության ոլորտում գործող 7 միկրոձեռնարկություններին հնարավորություն է տալիս ստանալ 30% սուբսիդավորում՝ արևային կայաններ տեղադրելու համար: Արևային կայան ստացող միկրոձեռնարկությունը որպես կանխավճար պետք է վճարի արևային կայանի արժեքի ընդամենը 10%-ը: Արժեքի մնացած 60%-ը միկրոձեռնարկությունը կվճարի մաս առ մաս՝ 5 տարվա ընթացքում:

Ծրագրի առաջնահերթությունը հավասար հնարավորությունների ստեղծումն է այն միկրոձեռնարկությունների համար, որոնք փորձում են միջոցներ գտնել էներգետիկ ծախսերը նվազեցնելու համար: Մկրթական փուլում ծրագրին կարող են դիմել միայն Շիրակի և Գեղարքունիքի միկրոձեռնարկությունները, որոնք ակտիվորեն զբաղվում են գյուղատնտեսությամբ և անմիջականորեն նպաստում են սննդի արժեշտի արժեքի զարգացմանը: ՊՀԾ-ն նախատեսում է հետագայում ավելի մեծ հնարավորություններ ստեղծել Հայաստանի այլ մարզերի միկրոձեռնարկությունների համար:

Հայաստանում բարենպաստ պայմաններ կան կանաչ էներգիայի զարգացման համար: Արևային էներգիայի օգտագործումը լավ հնարավորություն է բարձրացնելու փոքր ձեռնարկությունների արտադրողականությունը՝ էներգետիկ ծախսերը նվազեցնելու միջոցով: Այս նախաձեռնությունը կօգնի միկրոձեռնարկություններին հաղթահարել մարտահրավերները, արդյունավետորեն վարել իրենց բիզնեսը և մրցունակ դառնալ շուկայում:

ՊՀԾ-ն կարևորում է Հայաստանի համար մատչելի և մաքուր էներգիա արտադրող արևային կայանների տեղադրումը, որոնք պարենային համակարգերի զարգացման իրական հնարավորություն են: ՊՀԾ-ի այս նախաձեռնության տեսլականն է՝ արևային կայանները հասանելի դարձնել փոքր ձեռնարկությունների համար:

ՊՀԾ-ի աջակցությամբ Հայաստանի 51 դպրոցներում արդեն իսկ տեղադրվել են արևային կայաններ, ինչի շնորհիվ նվազել են կրթական հաստատությունների էլեկտրաէներգիայի ծախսերը՝ օգնելով նրանց խնայողություններ կատարել և հոգալ դպրոցի կարիքները:

«Վերականգնվող էներգիայի հասանելիություն Հայաստանի միկրոձեռնարկությունների համար» ծրագրի ընտրության չափանիշների մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ՝ <https://bit.ly/3vcGiFr>

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց հայտադիմում՝ <https://ee.humanitarianresponse.info/x/DvidHWCa>

Դիմումները բաց կլինեն 2021 թ.-ի հոկտեմբերի 22 -ից մինչև 2021 թ.-ի հոկտեմբերի 31-ը, ժամը 18:00: Հաջողակ դիմորդները կտեղեկացվեն ՊՀԾ-ի կողմից: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք կապվել մեզ հետ հետևյալ էլ. հասցեով՝ wfp.yerevan@wfp.org կամ զանգահարել (374 10) 58 05 38 հեռախոսահամարով: